

Հավելված
ՀՀ փաստաբանների պալատի նախագահի
23.06.2016թ. թիվ 206-Լ որոշման

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

ՀԵՌԱՎԱՐ ԶԵՎՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Փաստաբանների պալատ**) խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ հաստատված Փաստաբանների վերապատրաստման կարգի (**այսուհետ՝ Կարգ**) 11-րդ կետին համապատասխան, սույն կարգով սահմանվում է հեռավար ձևով (**այսուհետ՝ Հեռավար**) վերապատրաստում իրականացնելու հետ կապված հարաբերությունները (առանձնահատկությունները):

1.2 Հեռավար վերապատրաստում կարող է իրականացնել Փաստաբանների պալատը կամ «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամը (**այսուհետ՝ Փաստաբանական դպրոց**):

1.3 Փաստաբանական դպրոցի կողմից Հեռավար վերապատրաստման վերաբերյալ տեղեկությունները յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդ ամսվա 10-ը, ներկայացվում է Փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին:

2. Հեռավար վերապատրաստման կարգը

2.1 Հեռավար վերապատրաստումն իրականացվում է համացանցի միջոցով միաժամանակյա դիտման ռեժիմով:

2.2 Հեռավար վերապատրաստման յուրաքանչյուր դաս բաղկացած է առնվազն չորս ակադեմիական ժամից:

2.3 Հեռավար վերապատրաստում անցնող փաստաբանների ժամային հաշվարկն իրականացվում է առցանց եղանակով, համապատասխան մասնագետի կողմից: Հեռավար վերապատրաստում անցնող փաստաբանի ներկայությունը տեսախցիկի առջև պարտադիր է:

2.4 Հեռավար ձևով վերապատրաստմանը կարող են մասնակցել միայն՝

- Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի վարչական տարածքներում հաշվառված և գործունեություն ծավալող փաստաբանները,

- այլ պետությունում գտնվող փաստաբանները,

- տեղաշարժման սահմանափակումներով պայմանավորված առողջական խնդիրներ ունեցող փաստաբանները՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի որոշման հիման վրա,

• այն փաստաբանները, որոնց թույլատրված է մասնակցել կոնկրետ թեմայով վերապատրաստմանը:

3. Հեռավար վերապատրաստման առանձնահատկությունները

3.1 Հեռավար վերապատրաստման դասընթացը համացանցի միջոցով անցկացվող դասընթաց է, որի ընթացքում միաժամանակյա կարող են միանալ սահմանափակ թվով փաստաբաններ, ովքեր սույն կարգի համաձայն նախապես գրանցվել են դասընթացին մասնակցելու համար և ստացել են մասնակցության թույլտվություն:

3.2 Դասընթացին հեռավար ձևով մասնակցելու (գրանցվելու) համար փաստաբանը պարտավոր է ոչ ուշ, քան դասընթացը սկսելուց երեք օր առաջ էլեկտրոնային նամակ ուղարկել համապատասխան հայտարարության մեջ նշված էլեկտրոնային հասցեով: Նույն կարգով դրական պատասխան ստանալուց հետո, փաստաբանը համարվում է գրանցված դասընթացին:

3.3 Հեռավար կարգով վերապատրաստում անցնող փաստաբանը պետք է ունենա տեխնիկական բավարար միջոցներ, մասնավորապես Հեռավար վերապատրաստմանն արդյունավետ մասնակցելու համար անհրաժեշտ են ստորև նշված միջոցները (պայմանները)

- համակարգիչ (Dual-Core պրոցեսոր՝ 2 GHz կամ ավելի բարձր հաճախականությամբ),
- ինտերնետ (թողունակություն նվազագույնը՝ մուտքային 2 մբիտ/վ և ելքային 1 մբիտ/վ),
- տեսախցիկ,
- բարձրախոս,
- Google chrome կամ Internet Explorer,
- MS Office (Word Document, Excel Document),
- Adobe Reader (PDF):

3.4 Գրանցված դասընթացի համար նախատեսված ժամին փաստաբանը պարտավոր է միանալ դասընթացին՝ համակարգ մուտք անելով իր հեռավար վերապատրաստման համար նախատեսված անձնական էջի (Google +) մուտքանունն ու գաղտնաբառը:

3.5 Դասընթացավարը տեսախցիկի միջոցով դասընթացը ներկայացնում է իրենց համակարգիչների առջև նստած փաստաբաններին:

3.6 Հեռավար վերապատրաստման դասընթացին մասնակցող փաստաբանը պարտավոր է՝

3.6.1 վերապատրաստման դասընթացի ժամանակ բացառել կողմնակի ձայները, աղմուկը,

3.6.2 տեսախցիկը դասի ժամանակ միշտ պահել միացված,

3.6.3 տեսախցիկն ուղղել այնպես, որ տեսանելի լինի փաստաբանի դեմքը,

3.6.4 տեխնիկական խնդիրների դեպքում անմիջապես հայտնել դասընթացավարին,

3.6.5 բարձրախոսը միացնել միայն դասախոսի, լսարանի կամ ՀՀ փաստաբանական պալատի հետ կապ հաստատելու կամ հարց տալու դեպքում,

3.6.6 դասընթացն սկսվելուց 10 րոպե առաջ մուտք գործել ՀՀ փաստաբանական պալատի կողմից տրամադրված հեռավար

վերապատրաստման համար նախատեսված իր անձնական էջ (Google +):

3.7 Սույն կարգի 3.3, 3.4 և 3.6 կետերով սահմանված պարտականությունները կամ պայմանները չկատարելու դեպքում, փաստաբանի կողմից հեռավար վերապատրաստման դասընթացին մասնակցությունը չի հաշվարկվի որպես պարտադիր վերապատրաստման ժամ:

4. Եզրափակիչ դրույթներ

4.1 Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2016թ. հուլիսի 1-ից:

4.2 2016 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում, դասընթացի կազմակերպչի կողմից տեխնիկական խնդիրներ արձանագրվելու դեպքում, դրանք մեկնաբանվելու են հոգուտ դասընթացի մասնակից փաստաբանների: